Իմ աստվածային ինքնությունը և նպատակը

1. Կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Դիտեր Ֆ. Ուխդորֆի այս խոսքերը՝ ուշադրություն դարձնելով, թե ինչ ցանկություններ ունի Փրկչը ձեր վերաբերյալ.

Ես հավատում եմ, որ Փրկիչ Հիսուս Քրիստոսը կցանկանար, որ դուք տեսնեիք, զգայիք և իմանայիք, որ Նա ձեր ուժն է: Որ Նրա օգնությամբ չկան սահմաններ, թե դուք ինչեր կարող եք իրականացնել: Որ ձեր ներուժն անսահման է: Նա կցանկանար, որ դուք տեսնեիք ձեզ այնպիսին, ինչպիսին Նա է տեսնում ձեզ: Եվ դա շատ է տարբերվում նրանից, թե ինչպես է աշխարհը տեսնում ձեզ:

Անշուշտ, Փրկիչը կհայտարարեր, որ դուք Ամենակարող Աստծո դուստրը կամ որդին եք: Ձեր Երկնային Հայրը տիեզերքի ամենափառահեղ էակն է՝ լի սիրով, ուրախությամբ, մաքրությամբ, սրբությամբ, լույսով, շնորհով և ճշմարտությամբ: Եվ Նա ցանկանում է, որ մի օր դուք ժառանգեք այն ամենը, ինչ Ինքն ունի: (Դիտեր Ֆ. Ուխդորֆ, «Հիսուս Քրիստոսը երիտասարդների ուժն է», *Լիահոնա*, նոյ. 2022, 9–10)

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 14.7 հատվածը՝ փնտրելով, թե ինչ է Տերը ցանկանում տալ ձեզ:

2. Կարդացեք նախկինում Երիտասարդ կանանց գերագույն նախագահությունից քույր Միշել Դ. Քրեյգի այս խոսքերը՝ փնտրելով նրա խորհուրդը յուրաքանչյուրին, ով հարցականի տակ է դնում իր աստվածային արժեքը.

Մեզ համար, թերևս, ամենակարևորն այն է, որ հստակ տեսնենք, թե ով է Աստված, և ով ենք մենք իրականում. երկնային ծնողների որդիներ և դուստրեր՝ «աստվածային էությամբ և հավերժական ճակատագրով» [«Երիտասարդ կանայք» թեմա, ChurchofJesusChrist.org]: Խնդրեք Աստծուն հայտնել ձեզ այդ ճշմարտությունները, ինչպես նաև այն, թե Նա ինչ կարծիք ունի ձեր մասին: (Միշել Դ. Քրեյգ, «Աչքեր՝ որ տեսնեք», Լիահոնա, նոյեմբեր 2020, 15)

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 18.10–13 հատվածները՝ փնտրելով, թե Երկնային Հայրը ինչպես է վերաբերվում ձեզ:

3. Կարդացեք Երեխաների միության գերագույն նախագահ Սյուզան Հ. Փորթերի խոսքերը՝ փնտրելով, թե ինչու մեզնից յուրաքանչյուրը պետք է իմանա, թե ինչպես է Երկնային Հայրը վերաբերվում մեզ:

Երբ գիտես և հասկանում ես, որ լիակատար սիրով սիրված ես՝ որպես Աստծո զավակ, ամեն ինչ փոխվում է: Փոխվում է վերաբերմունքդ քո նկատմամբ, երբ սխալվում ես: Փոխվում է զգացողությունդ, երբ պատահում են դժվարություններ: Փոխվում է Աստծո պատվիրանների մասին քո մտածելակերպը: Փոխվում է քո տեսակետը մարդկանց մասին և հասկանում ես, որ կարող ես ինչ-որ բան փոխել կյանքում: (Սյուզան Հ. Փորթեր, «Աստծո սերը՝ հոգու համար ամենաբերկրալին», *Լիահոնա*, նոյեմբեր 2021, 33)

4. Կարդացեք նախագահ Ռասսել Մ. Նելսոնի այս խոսքերը՝ փնտրելով, թե ինչ է Նա ուսուցանել մեզանից յուրաքանչյուրի վերաբերյալ մեր Երկնային Հոր հույսերի մասին.

Իր զավակների համար Երկնային Հոր ծրագիրը թույլ է տալիս մեզ ապրել այնտեղ, որտեղ Նա է ապրում և ապրել այնպես, ինչպես Նա է ապրում՝ ի վերջո, ավելի ու ավելի նմանվելով Իրեն: Նրա ծրագիրը բառացիորեն մեզ տալիս է ողջ հավերժության ամենաառատ օրհնությունները, այդ թվում՝ «Քրիստոսի հետ ժառանգակիցներ» դառնալու հնարավորությունը [Հռոմեացիներին 8.17]: (Ռասսել Մ. Նելսոն, «Ընտրություններ հավերժության համար» [համաշխարհային հոգևոր հավաք չափահաս երիտասարդների համար, 15 մայիսի, 2022], broadcasts.ChurchofJesusChrist.org)

© 2024 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_553-1